

տարեալ գործը լինելով, ամենաանկողմնապահ եւ լուրջ մի գիտնականի գրչի տակից ելած՝ այս գիրքը կարող է ի միջի այլոց ամէնից ճշգրիտ գաղափարը տալ, թէ որչափ տեղեկութիւն եւ ինչ հայեացքներ ունին ներկայումս Հայոց եկեղեցու մասին գիտնական աշխարհի մէջ։ Ուստի աւելորդ չհամարեցինք ստորեւ յառաջ բերել մեր եկեղեցուն վերաբերեալ հատուածը՝ գրեթէ քառացի թանգամանութեամբ, գեղչելով միայն ծանօթութիւնները։ Յարգելի ուսուցչապետի համար իբրեւ աղբիւր ծառայել են Կատտենբուրգի, Պետերմաննի, Գուտշմիդի, Տէր Միքէլեանի եւլն գրուածները եւ մեր երկու յօդուածները։ Ինչպէս ընթերցողը կտեսնէ՝ այդ աղբիւրները տեղ տեղ նորան մոլորեցնում են եւ թիւրիմացութիւնների պատճառ տալիս, որոնց նկատմամբ մեր դիտողութիւնները կանենք յաջորդ համարում։

Կ. Վ.

Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

Նեստորական եկեղեցուց աւելի հին, թէև դաւաճանքով նրանից յետոյ բաժանուած Արեւելեան պետական եկեղեցուց, Հայ եկեղեցին է՝ արեւելեան ազգային եկեղեցիների մէջ ամէնից նշանաւորը, ամէնից պատկառելին և հոգևոր կողմով ամէնից կենդանին։ Եթէ արեւելի եկեղեցիների համար առհասարակ ազգային բնաւորութիւնը հիմք է դարձել առանձնանալու և ինքնուրոյն դիրք բռնելու՝ ևս առաւել Հայ եկեղեցւոյ համար։ Ե. դարի առաջին կէսերից սկիզբն առնող մի շարք աւանդութիւններ այդ ազգային եկեղեցու անմիջական հիմնադիր են համարում իրեն Բրիտանոսին։ Այդ աւանդութեանց համաձայն երբ Հայ ժողովուրդը Թագէոս և Բարդուղիմէոս առաքեալների և նրանց յաջորդների քարոզութեամբ պատրաստուեցաւ քրիստոնէութիւնն ընդունելու, և մասամբ ընդունեց, Բրիտանոս մեանգամ ևս իջաւ երկնքից «յատկապէս ի փրկութիւն Հայ ժողովրդեան» և պատուիրեց Գրիգոր Լուսաւորչին (+ 331)

Հին Հայաստանի վաղարշապատ մայրաքաղաքում իր ցոյց տուած յատակադժով մի եկեղեցի կանգնել, որը իր հովանու տակ էր առնելու համայն հայութիւնը: Եւ ահա կառուցին Էջմիածնի տաճարը, որտեղ մինչև օրս նստում է ամենայն Հայոց հայրապետը: Իսկապէս Գրիգոր Լուսաւորիչ, Հայ (սխալ է ասել «Լուսաւորչական») կամ «Գրիգորեան») եկեղեցու բուն առաքեալը, եղել է մի հայ քարոզիչ, որի դործունէութեան արդիւնքն էր քրիստոնէութեան Հայաստանում Տրդատի դարձից յետոյ, Գ. դարու սկզբին, ազգային կրօն դառնալը: Հայ եկեղեցին ազգային քրիստոնէական եկեղեցիների մէջ ամէնից հինն է: Եկեղեցի և ազգ, դոնէ և. դարից ի վեր, անանջատ կերպով միացած են եղել այստեղ. հայերի հասկացողութեամբ դեռ մինչև այսօր «Հայ» և «քրիստոնէայ» անունները հոմանիշ դադափարներ են, և այդ իր ազգային անկախութիւնը կորցրած Ժողովրդի համար Էջմիածնի հայրապետը ոչ միայն եկեղեցու ներկայացուցիչ է, այլ և ազգութեան: Ամէն կողմի Հայերը, որոնց ճակատը մկրտութեան աւազանում օծուում է Ս. Էջմիածնից ստացուած միւռնոյ՛ դրանով և իմի են ձուլուում և կազմում մի մարմին, որի սիրան Սրարաւի մօտ Էջմիածնում է բաբախում» *:

Իրօք Հայ եկեղեցին ոչ այնչափ հին է, ոչ սկզբից և եթ այնպէս ազգային և անկախ, ոչ էլ նրա կենտրոնը հենց առաջին օրից Էջմիածինն է եղել, ինչպէս աւանդութիւնն է ընդունում: Յիրաւի արդէն Գ. դարում Հայաստանի մէջ քրիստոնէաներ կային՝ գլխաւորապէս ասորական ազգեցութեամբ յառաջ եկած, բայց մինչև առաքելների ժամանակ հայ—քրիստոնէութիւնը չի հասնում: Ժողովրդի դարձը Տրդատի օրով արդիւնք էր անշուշտ որոշ քաղաքական հանգամանքների. և ոչ թէ Էջմիածնի տաճարը, այլ Տարօն դաւառի Սշտիշատում, ազգային հեթանոսա-

* Այս, ինչպէս և վերևի չափերաների մէջ առնուած՝ խօսքերը մեր մի յօդուածից են:

կան սրբութիւնների տեղ կառուցած Գրիստոսի եկեղեցին էր սկզբում «Մայր ամենայն եկեղեցեաց Հայոց»։

Սկսած այն օրից, երբ Սասանեանները Պարսկաստանում Արշակունիների հարստութեան վերջ էին դրել և երբեմնակի յաջողութեամբ փորձում էին նոյն ծագումն ունեցող Հայ Արշակունիներից ևս խլել նոցա թագաւորութիւնը, Հայերը թշնամացել էին Պարսիկների հետ և ստիպուած էին պաշտպանութիւն ընդունել Հռոմէական պետութիւնից։ Քաղաքական այսպիսի պայմաններում՝ կայսերութեան սահմանների մէջ կրթութիւն ստացած Գրիգոր լուսաւորիչը Հայաստանում քրիստոնէութեան հիմքը դրաւ։ Նրա հետ մէկտեղ Յայներ ու Սսորիներ ևս դեր էին կատարում քրիստոնէութիւնը տարածելու գործում։ Այսպիսով եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ ևս իրենց հետքն են թողել քաղաքական հանգամանքները։ Գրիգոր լուսաւորչին Հայաստանի վերայ եպիսկոպոս էր ձեռնադրել Պոնտոսի Կեսարիոյ արքեպիսկոպոսը, և մինչև Ներսէս Մեծ, Գրիգորի թոռան թոռը, որը կրօնաւորութեան ներմուծողն եղաւ Հայաստանում, Գրիգորի յաջորդները՝ Հայ եպիսկոպոսները («կաթողիկոսունք»), Կեսարիայում էին ստանում իրանց ձեռնադրութիւնը։ Այս յարաբերութիւնը խզելուց յետոյ միայն Հայերն ունեցան առանձին հայրապետութիւն և կազմեցին առանձին անկախ եկեղեցի։ 363 թուից սկսած Հայերի բարեկամական յարաբերութիւնն հռոմէական պետութեան հետ սկսում է նորից լարուել։ Հայաստանը բաժանւում է հռոմէական և Պարսիկ պետութիւնների մէջ 387 թ.-ին (Փոքր Հայք, և Մեծ կամ Պարսկահայք)։ Մեծ Հայքում առ ժամանակ մնում են յիրաւի Արշակունի թագաւորներ, բայց նրանք պարզապէս հարկատու իշխաններ էին, և շատ չանցած (428-ին) չքանում է անկախութեան այդ վերջին ստուերն ևս։ Հայաստանն այնուհետև դարեր շարունակ կռուախնձոր է լինում իր հզօր հարեալների համար։ Սակայն այս շարժարանաց պատմութեան օրերում իսկ, Մեծն Սահակի (390—439) հայրապետութեան միջոցին, քրիստոնէութիւնը Հա-

յաստանում՝ բոլորովին ազգային բնաւորութիւն է ընդունում, որի արտայայտութիւնն է ս. Գրքի հայերէն թարգմանուելը Մեսրոպի ձեռքով՝ Հայ դրականութեան սկզբնաւորութիւնը (Էջմիածնի աւանդութիւնն ևս այդ ժամանակ ծնունդ առած պէտք է լինի)։ Այսպիսով եկեղեցին դառնում է ազգի պահպանութեան խարխալը և երկուսը միասին անվտանգ անցնում են պատմութեան այդ ողբալի շրջանը, որ սպառնալից էր, մանաւանդ է. դարի սկզբում, երբ Բիւզանդիոնի ազգեցութիւնը չափից աւելի զօրացել էր Պարսիկների թուլութեան պատճառով։ Ազգութեան ծաղկման մի նոր շրջան էր Հայաստանում 885—1046 թ., երբ Բագրատունիների հարստութիւնն է հանդէս գալիս։ 1045-ից յետոյ, մանաւանդ երբ 1080 թուին Կիլիկիայում գաղթական հայերի ձեռքով հիմնուած Ռուբինեանց հարստութիւնը, Սիւ մայրաքաղաքով՝ Կործանուեց (1375-ին), հայերը մի անգամ ընդ միշտ Կորցրին իրենց ազգային անկախութիւնը։ Նոցա հայրենիքը բաժանել են իրենց մէջ թուրք, Ռուս և Պարսիկ պետութիւնները, և շատ հայեր ապրում են հայրենիքից դուրս ցրուած։ Ազգային եկեղեցին սակայն պահել է իր անկախութիւնը։

Այդ անկախութիւնը դժուար թէ գլուխ դար, եթէ ե. դարի կէսերից սկսած դաւանական մի խտրութիւն պատուար չկանգնէր Բիւզանդական եկեղեցու դէմ։ Հայերը, որ Նիկիոյ տիեզերական ժողովում ունեցան իրենց ներկայացուցիչը, չէին մասնակցել ոչ 381-ի և ոչ 431-ի ժողովներին, և այդպէս նաև Քաղկեդոնի ժողովից (451) հեռու մնացին։ Առաջին երկու ժողովների որոշումներն ընդունուեցան յետոյ իբրև ուղղափառ՝ առանց նկատուելու հարկաւ իբրև «տիեզերական ժողովների» վճիռներ։ Գալով Քաղկեդոնի ժողովին՝ արդէն ե. դարում կտրական կերպով մերժուեցաւ թէ հայերի և թէ վրացիների ու աղուանների կողմից, որոնք ենթարկուում էին Հայոց հայրապետի իշխանութեանը։ Արդարև յետոյ հայերի բռնած դիրքը, — քաղաքական կապերի, շարունակ կրկնուող միութեան փորձերի և 1075 թ.-ից պապական աթոռի հետ ու-

նեցած յարաբերութիւնների պատճառով—Քաղկեդոնի և յաջորդ դարերում դումարուած արևելեան տիեզերական ժողովների նկատմամբ երբեմնապէս հաստատ չէ եղել։ Սակայն բոլորի վախճանն այն եղաւ, որ հայերի մեծամասնութիւնը հաւատարիմ մնաց իր մայրենի եկեղեցուն՝ մերժելով միշտ քաղկեդոնականութիւնը, մինչդեռ վրացիները 580 թ. հերից ի վեր յայների ազդեցութեան ենթարկուեցան և ընդունեցին Քաղկեդոնի ժողովը, Աղուանից երկրում քրիստոնէութիւնը տեղի տուեց մահմեդականութեան, իսկ հայերից մի փոքրիկ հատուած յարեց ընդ միշտ Հռոմին։

Ինչպէս որ ըստ այսմ հայ եկեղեցին դաւանաբանական շփոթութիւններից ծագած դժուարութիւններին և պառակտումներին յաղթեց վերջապէս, այդպէս և գլուխ հանել կարողացաւ իւր նուիրապետական միութեան վրտանդ սպառնացող քաղաքական բարդութիւններից ու նոյնա հետեանքներից։ Էջմիածնի հայրապետական աթոռը յաճախ տեղից տեղ է փոխադրուել, Զ. դարից ի վեր, դուցէ և աւելի վաղ, Դուինն էր դարեր շարունակ հայրապետանիստը, Ժ. դարում մի առ ժամանակ Վանայ լճի Աղթամար կղզին, ապա Անին՝ Բագրատունեաց մայրաքաղաքը, 1147 թ.—ից յետոյ Հռոմկլան, վերջապէս Սիւրճ Թուրքմենեանց մայրաքաղաքը։ Այս տեղափոխութիւնները առիթ էին մասնակի հայրապետական իշխանութիւնների յառաջ գալուն։ Միջին դարերում երկար միջոց միաժամանակ մի քանի կաթողիկոսներ էին լինում։ Քաղաքական և եկեղեցական շփոթ հանդամանքներն ևս նպաստում էին կաթողիկոսութեան բաժան բաժան լինելուն։ Այնուամենայնիւ հին Էջմիածինը, ուր 1443 թ.—ին նորից կաթողիկոս հաստատուեցաւ, Սոյ մի վիճելի ընտրութեան պատճառով՝ վերանորոգեց իւր պատմութեամբ և աւանդութեամբ նուիրագործուած դիրքը։ Յիշատի այսօր Էջմիածնի հայրապետից զատ չորս հայ պատրիարքներ ևս կան.—Աղթամար կղզու վերայ և Սսում նստում են դեռ այսօր մի մի «կաթողիկոս», Երուսաղէմը 1311-ից, Կ. Պո-

լիսը 1461-ից ի վեր մի մի «պատրիարք» ունին,—և այս չորս տաճկահայտակ պատրիարքները, որոնց կողմից Կ. Պոլսոյ պատրիարքը ընդհանուր ներկայացուցիչ է Բ. Դրան տաջ, իրենց եկեղեցական վարչութեան մէջ անկախ են. Էջմիածնի կաթողիկոսի իշխանութիւնը, որին օժանդակ է կարգուած Ռուսաց Վայսեր կողմից 1836 թ.-ին երկու արքեպիսկոպոսներից, երկու եպիսկոպոսներից և չորս վարդապետներից բաղկացած մի Սինոդ՝ տարածուած է Ռուսաց և Պարսից հայտակ հայերի վերայ և աւելի նեղ սահման ունի քան Կ. Պոլսոյ պատրիարքինը: Սակայն միայն Էջմիածնի կաթողիկոսը իրաւունք ունի եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու ամբողջ ժողովրդի համար, միւս երկու կաթողիկոսներն այդպիսի իրաւունք վայելում են միայն իրենց փոքր վիճակի համար, մինչ երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքները զուրկ են այդ իրաւունքից: Բացի դորանից բոլոր հայոց եկեղեցիներում էջմիածնի կաթողիկոսը յիշուում է: Իսկ երբ նորա աթոռը թափուր է մնում՝ Էջմիածնում գումարուում է ընտրողական ժողով երկու կանդիտատներ որոշելու համար, որոնք առաջարկուում են Ռուսաց կառավարութեան, այդ ժողովին իրաւունք ունին հայոց թեմերից, որոնց թիւն ընդամենը յիսունի չափ է, իւրաքանչիւրը երկու ներկայացուցիչ ուղարկելու:

Հայերն ևս մի ժամանակ անցրին (ԺԳ.—ԺԷ դար), երբ նոցա ներկան՝ իրենց եկեղեցւոյ և եկեղեցական գրականութեան փառաւոր անցեալի համեմատութեամբ, գրեթէ նոյնչափ ոգորմելի էր, որչափ միւս արեւելեան ազգային եկեղեցիների այժմեան դրութիւնը: ԺԷ. դարից ի վեր այս անկման դէմ մեծ ջանքեր են լինում: Մխիթարեանց օրինակը հայոց ազգային եկեղեցւոյ վերայ ևս ազդեցութիւն է գործել, և 1828 թ.-ից սկսած, երբ նախկին Պարսկահայաստանի մեծագոյն մասն Էջմիածնի հետ Ռուսաց իշխանութեան ներքոյ մտաւ, ժամանակակից քաղաքակրթութեան համար այս բաժնի հայոց եկեղեցւում յառաջադիմութեան աւելի ազատ ճանապարհ է բացուել, քան

տաճկահայատակ հայերի մօտ, որոնց միայն մի փոքր մասը, այն ևս հայրենիքից դուրս՝ ժամանակակից կրթութիւն ճաշակել կարող էր։ Հայ եկեղեցին այժմ քաղաքացիական կրթութիւնից դուրս եկեղեցի չէ, նա տպարաններ ունի, կրօնական կրթութիւն է տալիս, Էջմիածնի կաթողիկոսի հաւանութեամբ Մոսկուայում լոյս է տեսել մի «Հրահանգքիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան հայ. եկեղեցւոյ»*։ Էջմիածնում կայ մի հոգեւոր դպրոց, որի ուսուցիչների մի մասը արտասահմանում՝ նաև մեզ մօտ Գերմանիայում, են իրենց կրթութիւնն ստացել։ Մինչև իսկ պարբերական եկեղեցական հրատարակութիւնն ևս չի պակասում**։ Այսպիսով մենք միջոց ունինք փոքր ինչ ի մօտոյ ծանօթանալու հայ եկեղեցւոյ դաւանական, նոյն իսկ աստուածաբանական ինքնուրոյնութեանը։

Հայերը Քաղկեդոնի ժողովը մերժելով հանդերձ չեն կամենում միաբնակների հետ հաշիւ ունենալ, Եւտիքէս և Յուլիանոս Հաղիկաոնացին իբրև աղանդաւոր են ճանացուած։ Սակայն միաբնակների կողմից 524 թ.-ին «Սուրբ Աստուած»ի վերայ եղած յաւելումը (խաչեցար-ը) ընդունել են և Յակոբիկների հետ եկեղեցական հաղորդակցութիւն ունին։ Միւս կողմից պատմութեան ընթացքում նոքա երբեմն աւելի ընդարձակ զիջողութիւններ են արել յոյներին քան Սեվերեանները, Ներսէս Դ. Կլայեցի կաթողիկոսը, որ «Շնորհալի» է կոչուում (1166=1173) և այսօր ևս ամէնից աւելի յարգուած հայրերի շարքումն է շատ հաշտարար գիրք բռնելով յունաց նկատմամբ, ճանաչում է մի Քրիստոսի մէջ երկու կամք—«այլ ի միոյ էութեանէն կրկին եղելոց կամաց՝ ըստ այլ և այլ ժամանակի»***։

* Մսեր մագիստրոսի հեղ.։

** «Արարատ» ամսագիրը։

*** Տես. Սահմանք հաւատոյ—ի խնդրոյ աստուածատէր թագաւորին Հռոմոյց Մանուէլի։—Սակայն ինքը Յարգելի ուսուցչապետը նկատում է, որ քիչ յետոյ առած է. «Ի միոյ անձնիշխան կամաց աստուածութեանն երկուց լինել անհակառակաբար»։

Սակայն ներսէս Դ.-ի գրուածներում ևս բուն հայկական տեսակէտը պարզ երևում է։ Քաղկեդոնականութեան մէջ հայերին ամէնից աւելի անդուրը արեւմուտքից բերած տարնն է՝ Լեոնի տումարի—«ներգործէ իւրաքանչիւր բնութեամբն» դարձեալքը։ Այս կրկնակի «ներգործութեանց» համաձայն ըմբռնուող երկու բնութեանց ուսումը նեստորական գոյն ունի նոցա աչքում՝ նկատուում է իբրև ուրացումն անձի միութեան։ Սակայն նոքա ևս բնութեանց շփոթումն թոյլ չեն տալիս. «յերկուց բնութեանց մի», «միաւորեալ մի բնութիւն», «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացեալ»,—սոքա են արտայայտիչ ասացուածները։ Այս հայեացքը, որ դեռ մինչև այժմ պաշտպանում են հայ աստուածաբանները՝ ինչպէս և 482 թ.-ին հրատարակուած Տենտոսիկոնը, որ հաւանութիւն գտաւ Հայաստանում, կամ Սեբրոսի ուսումը՝ կարելի է բնորոշել իբրև Մեծ Կապադովկիացիների*, «եկեղեցւոյ ուղղափառ վարդապետների», Եւտիքականութեան (այսինքն Կիւրեղի սխալ հասկացուած Քրիստոսաբանութեան) և նեստորականութեան մերժմամբ՝ զտուած և ձեւաորուած հայեացքների։ Հաւատարիմ պահպանութիւն։ Ըստ այսմ՝ նաև պատարագի միջոցին կարգացուող հանգանակը ամբողջովին 370—400 թ.-ների գրոշմն է կրում, մի կողմ թողած այդ հանգանակի ծագման խնդիրը՝ նա ներկայացնում է մի բազմադրութիւն նիկիականից և որ և է մկրտութեան հանգանակի հատուածներից՝ հակապողինարեան, հակամարկելեան և Հոգեմարտների գէմ ուղղուած յաւելումներով։ Յամենայն դէպս այս հանգանակից, ինչպէս և բուն մկրտութեան հանգանակից կամ այն «խոստովանիմք»-ից, որ առաջ գործ էր ածուում միշտ առաւօտեան ժամերգութեան միջոցին, այժմ երբեմն միայն՝ Հայ եկեղեցու իսկութիւնը նոյնչափ քիչ կարելի է ճանաչել, որչափ 400 թ.-ի Յունաց եկեղեցին այն ժամանակուայ հան-

* Գրեգոր Աստուածաբանի, Բարսեղ Կեսարացու, Գրեգոր Նիւսացու։

դանակներից՝ Յիրաւի այդ հանգանակները պարունակում են դաւանանքը՝ բառի անձուկ իմաստով, այսինքն Երրորդութեան և Քրիստոսի մարդեղութեան գաղափարները, բայց ոչ եկեղեցւոյ ամբողջ վարդապետութիւնը:

Յիշեալ հանգանակներից դուրս եկեղեցւոյ վարդապետութեան վերաբերեալ բոլոր խնդիրներում վճռական նշանակութիւն ունի ս. Գրքի և եկեղեցւոյ «նշանափառ վարդապետների» վկայութիւնը: Սակայն շնորհիւ այն հանգամանքի, որ հայ հոգեւորականութեան գերակշռող մեծամասնութիւնը զուրկ է աստուածաբանական կրթութիւնից և անտեղեակ հայկական աւանդութիւններին՝ յաճախ մուտք են գտնում անհարազատ գաղափարներ, օրթոդոքս եկեղեցւոյ ազդեցութեամբ, և հասարակ ժողովրդի մէջ տնարգել գործում է «երկրորդակարգ քրիստոնէութիւնը»^{**}: Աւանդութեամբ և եկեղեցւոյ կարգաւորութեամբ նուիրագործուած գլխաւոր եկեղեցական կարգերն են. ա) Մկրտութիւն, որի հետ անմիջապէս տրուում է դրոշմը^{**} և, այդպէս ասած, մանուկների «շրթանց հաղորդութիւնը»: բ) Խոստովանութիւն հաղորդութիւնից առաջ, որ մասամբ հրապարակային է, մասամբ առանձնական, և որի համար արձակում տրուում է երբեմն ապաշխարութեան որոշ պահք բռնելուց յետոյ: գ) Պատարագը, որ կատարուում է անխմոր հացով և անապակ դինւով, և հաղորդութեան ասարերի փոխարկումն ընդունում է հին յոյների ըմբրանման համեմատ: Թէև քաւարանի գաղափար չունին հայերը, այնուամենայնիւ պատարագը լինում է «ի յիշատակ կենդանեաց և ննջեցելոց»: Դուրս հետ մէկտեղ յաճախ հաշուում են եօթն խորհուրդներ. Մկրտութիւն, Դրոշմ, հաղորդութիւն, Ապաշխարութիւն (այ. խոստովանութիւն), Չեւնադրութիւն, Ամուսնութիւն, և Օծումն հի-

* Սուրբերի, մասունքների պաշտամունք, ուխտեր, նախապաշարմունքներ ևլն:

Կ. Վ.

** Կաթոլիկ եկեղեցին, ընչպէս յայտնի է, մկրտութիւնից բաժան և տարիներ յետոյ է դրոշմ առելու: Կ. Վ.

աւանդաց (վերջինս դորժադրուում է միայն քահանաների համար)։ Օրթոդոքս հայեացքների այսպիսի ազդեցութիւնը երևում է նոյն իսկ վերև յիշուած քրիստոնէականի վերայ, որ անշուշտ, վաւերացեալ լինելով հանդերձ՝ անսխալական չէ։ Մոռացուում է նմանապէս, հոգեորականութեան մէջ իսկ՝ բուն հայկական աւանդութիւնը պատկերների նկատմամբ, որ միայն մի սեղանի պատկեր է ընդունում և ոչ «իկոնոստաս», կամ բուն հայկական տեսակէտը սուրբերի մասին, որ նոցա բարեխօսութեան հետ թոյլ է տալիս մի տեսակ միջնորդական աղօթք ևս եկեղեցու կողմից նոցա համար՝ պատարագի մէջ նոցա յիշելով,—և տեղը բռնում են օրթոդոքս հայեացքներ։

Պաշտամունքը թէպէտ այնպէս թատերական ընտելութիւն չունի, ինչպէս օրթոդոքս եկեղեցւոյ մէջ, այնուամենայնիւ շատ զարգացած է և արարողութիւններով ճոխ՝ ունի այնպիսի կարգեր, որոնք կարող են սնտրիապաշտութեան տեղիք տալ։ Ամէն առաւօտ վաղ, երբեմն արդէն ժ. 3-ին, ժամերգութիւն կայ, ինչպէս և երեկոյեան։ Կիրակնօրեայ ժամերգութիւնը պատարագի հետ տևում է 2—3 ժամ. տօնական ժամասացութիւններն աւելի ևս երկար։ Ընդհակառակն քարոզի օրերում, որ յաճախ չեն, չնայելով քարոզի երկար լինելուն՝ ժամասացութիւնը շատ ժամանակ չի բռնում։ Տօնական օրերը խիստ բաղմամբիւ են, գրեթէ հաւասար յունականին։ Պէտք է նկատել, որ Յիսուսի ծննդեան և մկրտութեան տօնը յունուարի 6-ին է կատարուում և Աստուածածնի վերափոխման տօնը՝ լինելով հայերի համար շարժական տօն, օգոստոսի 12-ի և 18-ի մէջ է ընկնում։ Պահոց օրերը՝ հաշուելով շաբաթուայ պահքերը, ուրբաթը և չորեքշաբթին, 189 են։

Հոգեորականութիւնը բաժանուում է երկու կարգի՝ բարձր և ստորին։ Առաջին կարգին պատկանում են արքեպիսկոպոսները,—որոնց մէջ էջմիածնում նստող «Քրիստոսի փոխանորդը», միւս երկու կաթողիկոսները և երեսուսուղէմի ու Կ. Պոլսի պատրիարքները,—եպիսկոպոսներն ու վարդապետները, վերջիններին մէջ կան դարձեալ աստի-

ճանաւորութիւններ: Երկրորդ կարգին պատկանում են քահանաները, աւագ սարկաւագները, սարկաւագները, կիսասարկաւագները և չորս անուանական ստորին աստիճանների պաշտօնեաներ՝ ջահընկալներ, ընթերցողներ, երգմանեցուցիչներ և դռնապաններ: Բարձր կարգի հոգևորական լինում են բացառապէս կրօնաւորները. վանքերն են եպիսկոպոսների աթոռանիւտները: Աւագ սարկաւագները կրօնաւոր են. քահանաները, սարկաւագներն ու կիսասարկաւագները կարող են մի անգամ ամուսնանալ: Կրօնաւորները ս. Բարսեղի կանոնադրութեամբ են ապրում: Աշխարհիկ քահանաները, որոնց եկամուտը օրինաւ կատարութիւններից, տասանորդից և կամաւոր նուէրներից է՝ յաճախ շատ քիչ բան են ստանում և ստիպուած են մի կողմնակի գործով ևս պարապելու: Կրօնաւորների և միւս հոգևորականների հագուստը, նաև եկեղեցական զգեստը՝ նման է ինչպէս Հայոց ուրիշ շատ բաներ, Յոյներին:

1831 թ.-ից ի վեր Հայերի մէջ, առաւելապէս ամերիկացի միսիոնարներ՝ աշխատում են բողոքականութիւն տարածել: Միսիոնարների գործունէութիւնն առանց արգիւնքի չի եղել նաև Տաճկահայաստանում. ընդամենը կլինեն մօտ 40 հազար բողոքական հայեր: Սակայն մի կողմ թողած այդ թուի փոքրութիւնը բոլոր հայերի համեմատութեամբ, որոնց թիւը մօտ 2¹/₂ միլիոն պէտք է լինի՝ այդ հաշուում 100000 կաթոլիկ հայեր, — ըստ իս կարելի է տարբեր կարծիք ունենալ, քան յայտնում է նոյն իսկ Վարնէկ*, բողոքական միսիոնի նպատակահարմարութեան մասին մի ազգի մէջ, որ պահել է իւր ազգային

* Ներկայումս Գերմանիայում գրեթէ ամենամուտ և անուանի ղեկավարը միսիոնարական գործի, որ Realencyclopädie կոչուած հանրագիտական բառարանի վերջին հրատարակութեան մէջ բողոքական միսիոնների համառօտ պատմութիւնը առել է և երեւի օգտակար է համարել միսիոնարների գործունէութիւնը Հայոց մէջ, մինչդեռ ինքը Պրոֆ. Աօօֆս դորա անտեղի լինելու մասին ուրիշ անգամներ ևս գրել ու խօսել է: Կ. Վ.

ինքնուրոյնութեան կատարեալ գիտակցութիւնը, որովհետեւ մի կողմից անհնարին չի թուում այստեղ քրիստոնէութեան վերակենդանացումն ու զօրացումը ներքուստ, և միւս կողմից միտինը իրեն յարողներին ազգի ընդհանրութիւնից կտրելով՝ զրկում է նաև բարոյական կապերից: Պէտք է չմոռանալ, որ Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է:

Մի հայ վերջերս ուշադրութիւն հրաւիրեց * հարաւային Ռուսաստանում գտնուած մի հայկական աղանդի վերայ, որ մկրտութիւն և դրոշմ, պատարագ, սրբոց և խաչի երկրպագութիւն, ուխտագնացութիւններ ևլն մերժում է և բոլոր իւր հետեւողներից մի նոր մկրտութիւն է պահանջում: Դոցա թոնդրակեցի են անուանում, և անկարելի չէ, որ նոքա կապ ունենան մի և նոյն անունը կրող միջնադարեան աղանդի հետ:



ԲՐԻՍՏՈՆԷՆԻԹԻԻՆ ԵՆ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ **

Առաջին հարցն է այստեղ, թէ արդեօք այդ կրօններից մէկը միւսի վրայ անմիջական ազդեցութիւն ունե-

* Խօսքը մեր մի գրուածքի մասին է, որ լոյս է տեսել Zeitschrift d. Kirchengeschichte թերթի մէջ, և օգտուելով գլխաւորապէս Ա. Երեցեանի «Փորձ»ում տպուած ուսումնասիրութիւնից՝ տեղեկութիւն է տալիս «նոր թոնդրակեցիների» մասին, որոնք յայտնուել էին մեր դարու սկզբներին Շիրակի Արեւիվալի գիւղում (և ո՛չ հարս. Ռուսաստանում): Կ. Վ.

** Այս յօդուածը քաղում ենք նորերս լոյս տեսած մի գեղեցիկ գրքից, որի հեղինակն է Բազելի համալսարանի աստուածաբանութեան անուանի ուսուցչապետ Ալֆրէդ Բերթոլետ և որ իւր կողմից հիւսուածք է Յուդէնէրգի նշանաւոր գրուածքից և այլ յայտնի գրքերից: